



ՄԻԱՄԱՆԹՈ

Բանաստեղծություններ

aegitas

Միամանր  
**Բանաստեղծություններ**

«Aegitas»

## Միամանքո

Բանաստեղծություններ / Միամանքո — «Aegitas»,

Արտասահմանում լույս են տեսնում Միամանքոյի ժողովածուները՝ «Դյուցազնորեն», «Հայորդիներ», «Հոգեւարքի եւ հույսի ջահեր» խորագրերով: Այդ գրքերը նվիրված են բացառապես հայ ժողովրդի ողբերգությանը: Մի շարք բանաստեղծություններում Միամանքոն կրկին խոսում է հայ բանաստեղծի հոգեկան դրամայից, որ ծագում է հայրենիքի ծանր բախտի պատճառով: Երեւակայության ուժով մեծացած այս պատկերը ջարդերի, բռնության, հալածանքի եւ մորթված սերունդների պատմությունն է: Հայրենիքի ողբերգության դրամատիկ պատկերն է «Ափ մը մոխիք, հայրենի տուն» բանաստեղծությունը: Միամանքոյի ստեղծագործությունը, ողբերգական պատկերների հետ միասին, ունի նաեւ լավատեսական բովանդակություն: Նա գրել է հերոսական բանաստեղծություններ, բարձրացրել հերոսներին, հողի պաշտպաններին: x«Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» բանաստեղծության մեջ, օրինակ, Միամանքոն արժարժում է այն միտքը, որ երգը պետք է արդար կովի տանի հերոսներին: Հերոսական բանաստեղծություններից են կազմված «Դյուցազնորենը» եւ «Հոգեվարքի եւ հույսի ջահերի» մի մասը: «Հայրենի հրավերում» արդեն, համեմատաբար խաղաղ տարիներին (1910 թ.) Միամանքոն արժարժում է խոր մտքեր, հայ մարդիկ պետք է վերադառնան երկիր, ցրված հայությունը կարող է ապրել միայն հարազատ հողի վրա, աշխատանքով ու ստեղծարար ոգով: 1912 թ. գրած «Սուրբ Մեսրոպ» պոեմում Միամանքոն լավատեսությամբ երագում էր մի ազատ հայրենիք, ուր պետք է ծաղկեք, միտքն ու հոգին, խոր հավատ էր հայտնում հայրենիքի հավերժության մասին:

© Միամանրո

© Aegitas

## Содержание

ՄԱՀՈՒԱՆ ՏԵՍԻԼՔ	6
ԹԱՂՈՒՄ	7
ԱՓ ՄԸ ՄՈՒԽԻՐ, ՀԱՅՐԵՆԻ՝ ՏՈՒՆ	8
Ա	8
Բ	9
Գ	10
Դ	11
Ե	12
Զ	13
Է	14
Ը	15
Թ	16
ՅՈԳՆՈՒԹԻՒՆ	17
ԱՐՑՈՒՆՔՆԵՐՍ	19
Ա	19
Բ	20
Գ	21
Դ	22
ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒՉԵՄ ՄԵՌՆԻԼ	23
Ա	23
Конец ознакомительного фрагмента.	24

# ՄԻԱՄԱՆԹՈ Բանաստեղծություններ

## ՄԱՀՈՒԱՆ ՏԵՄԻԼՔ

Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...  
Քաղաքներուն մէջ եւ քաղաքներէն դո՛ւրս,  
Եւ բարբարոսներն արիւններով կը դառնան,  
Մեռելներուն ու ոգեվարներուն վրայէն,  
Ագռաւներու բազմութիւններ կ'անցնին վերերէն,  
Արիւնտ բերաններով ու գինովի քրքիջներով...  
Տամաքահով մը կիսամեռները գայրոյթով կը խեղդէ,  
Ու պառաւներու անձայն կարաւաններ  
Շտապով կը փախչին լայն ճամբաներէն...:  
Գիշերին մէջէն արիւններուն ալիքը կը բարձրանայ,  
Ծառերուն հետ շատրուաններ ուրուագծելով,  
Ու ամէն կողմէ սոսկումով կը սուրան հալածուած՝  
Նախիրները հրդեհուող ցորեաններուն մէջէն...  
Փողոցներուն մէջ մորթուած սերունդներ կը տեսնեմ  
Եւ ամբոխներ անպատմելի սրածութենէ դարձող,  
Արեւադարձային տաքութիւն մը կը բարձրանայ  
Հրդեհի տրուած ազնուական քաղաքներէն...  
Ու մարմարի ծանրութիւնով իջնող ձիւնին տակ  
Աւերակներուն եւ մեռելներուն մենութիւնը կը մսի.  
Օ՛, մտիկ ըրէ՛ք սա սայլերուն ճոնչիւնն ահաւոր,  
Իրենց վրայ դիգուած դիակներուն տակ,  
Ու սգաւոր մարդերուն աղօթքներն արցունքոտ,  
Որ կածանէ մը դէպի համայնափոսերը կ'երկարին.  
Մտիկ ըրէ՛ք հոգեվարքներուն ձայները վերջին,  
Հովին հարուածներուն մէջ, որ ծառերը կը ջարդէ,  
Օ՛, մի՛ մօտենաք, մի՛ մօտենաք, մի՛ մօտենաք,  
Չըլլայ որ մօտենաք գերեզմանոցներուն եւ ծովուն,  
Կարմիր ջուրերուն վրայ նաւեր կը նշմարեմ հեռուն,  
Մեռելներու կուտակումներ անոնց մէջ կան,  
Ու ցաւէն գալարուող ալիքներուն վրայ  
Գանկեր ու սրունքներ ինծի կ'երեսան...

Մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք  
Փոթորիկին գոշը ծովուն ալիքներուն մէջ,  
Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...  
Մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք, մտիկ ըրէ՛ք  
Մահաձայն ոռնումը զարհուրեալ շուններուն,  
Հովիտներէն ու գերեզմաններէն ինծի հասնող,  
Օ՛, պատուհանները փակեցէ՛ք ու աչքերնիդ ալ,  
Կոտորա՛ծ, կոտորա՛ծ, կոտորա՛ծ...:

## ԹԱՂՈՒՄ

Յուսահատորեն ու պանդխտորեն անտառը վերադարձայ  
Իմ վախճանած բարեկանս համբուրելու համար,  
Ու բոլոր եղնիկներուն ու կարապներուն հետ,  
Որ լիճերուն ու հոգիս տխրութիւնը կը հասկնան,  
Թաղումը ըրինք բարեկամիս, ձմրան կէս գիշերի մը մէջէն...  
Օ՛ր, իր մարմինը ո՛րչափ ծանր էր իմ՝ կեանքէն յոգնած ուսերուս  
համար,  
Ու Մահը ո՛րչափ հեռու իմ այլաբաղձութիւնով իրեն կարկառուող  
տղու աչքերէս...  
Աստուածային ու անբասիր կարապները թաղումը տօնեցին,  
Ու ես եղնիկներուն հետ տաժանագինօրէն գերեզմանը փորեցի,  
Անտառին բոլոր ծառերը յողարկաւորներ եղան...  
Ու մահուան հովը՝ անոնց անձանօթ ու երկաթեայ բուրվառը...  
Ու մօտաւոր ու հեռաւոր քաղաքներուն բոլոր մահագանգերը  
նուիրական,  
Երկարօրէն, մահագուժօրէն ու բարեպաշտօրէն,  
Արեւէն այրի ու ամայի գիշերին մէջ ըսին թէ՛  
Բարեկամ մը անտառներու եղնիկներուն ու լիճերու կարապներուն  
Ու երկայն ու ահաւոր ծառերուն ու հովերուն հետ,  
Երկիւղածութիւնով իր բարեկամը կը թաղէ:  
Գիտէք թէ հեռաւոր ու մօտաւոր քաղաքները բոլոր  
Օրերուն ու մարդերուն ոճիրներէն քանդուեցան,  
Կարապներն ու խարտեաշ եղնիկները հովերուն մէջ  
խեղդուեցան...  
Չանգակներ հին եկեղեցիներու փառքերուն հետ լռեցին,  
Բայց իմ հոգիս, բայց իմ սգաւոր հոգիս,  
Այս բոլորին թաղումներէն ու մահացումներէն վիրաւոր՝  
Անտառներուն սարսափին մէջը բանտարկուած մնաց...

## ԱՓ ՄԸ ՄՈԽԻՐ, ՀԱՅՐԵՆԻՒՆՆԵՐ

### Ա

Աւա՛ղ, ապարանքի սը պէս մեծ էիր եւ շքեղ,  
Ու ես՝ երդիքներուդ սպիտակ կատարէն,  
Աստղածորան գիշերներու լոյսին հետ,  
Վարէն, ահեղավագ Եփրատին կ'ունկնդրէի...:

## Բ

Արցունքո՛վ, արցունքո՛վ լսեցի որ ամերակ առ ամերակ  
Քու լայնանիստ պատերոյ իրարու վրայ կործանեցին,  
Սարսափի օր մը, կոտորածի օր մը, օր մը արիւնի...  
Չքեզ եզերող պարտեզիդ ծաղկըներուն վրայ:

## Գ

Ու մոխրացա՛ւ այն սենեակը կապոյտ,  
Որուն որմերուն ետեւ եւ գորգերուն վրայ  
Իմ երջանիկ մանկութիւնս կը հրճուէր,  
Եւ կեանքս կ'աճէր եւ հոգիս իր թեւերը կ'առնէր...

## Դ

Փշրեցա՞ւ, ուրեմն, այն հայելին ոսկեծիր,  
Որուն եթերային խորութեանը մէջ  
Երագներս, յոյսերս, սէրերս եւ կամքս կարմիր,  
Տարիներով, մտածումիս հետ, ցոլացին...:

## Ե

Ու բակին մէջ երգող աղբիւրը մեռա՞ւ,  
Ու կոտրեցա՞ն պարտեզիս ոտին ու թթենին,  
Եւ այն առուակը, որ ծառերուն մէջէն կը հոսէր,  
Տանքեցա՞ւ, ըսէ՛, ո՞ր է, ցանքեցա՞ւ, ցանքեցա՞ւ...

## Չ

Օ՛, այն վանդակին կ'երագեն յաճախ,  
Որուն մէջ գորշագոյն կաքաւս, առաւօտուն,  
Արեւածագին հետ եւ վարդի թուփերուն դիմաց,  
Չարթնումի ժամուս՝ յստակօրէն կը կարգճէր...:

## Է

Հայրենի՛ տուն, հաւատա՛ որ մահէս յետոյ,  
Քու աւերակներոյ սեւին վրայ իմ հոգիս  
Պիտի գայ, որպէս տատրակ մը տարագիր,  
Իր դժբախտի երգն եւ արցունքը լալու...:

## Ը

Բայց ո՛վ պիտի բերէ, ո՛վ պիտի բերէ, ըսէ՛,  
Քու սրբագան մոխիրէդ ափ մը մոխիր,  
Մահուանս օրը, իմ տրտում դագաղիս մէջ,  
Հայրենիքս երգողի իմ աճիւնին խառնելու...



Ափ մը մոխի՛ր աճիւնիս հետ, Հայրենի՛ տուն,  
Ափ մը մոխի՛ր քու մոխիրէդ, ո՛վ պիտի բերէ,  
Քու յիշատակէ՛դ, քու ցաւէ՛դ, քու անցեալէ՛դ,  
Ափ մը մոխիր... իմ սրտիս վրան ցանելու...:

## ՅՈՒՆՈՒԹԻՒՆ

Հոգիիս վրայ լուսինը կը ձիւնէ...

Օ՛, դէպի Խաւարներն ու Մոռացումը քալէ՛,  
Ո՛վ յոգնած ու դանդաղ ու ծանր ուխտաւոր,  
Աղբիւրներու սա՛ պայծառ տղուն հետ առանձին.  
Ան հոնտեղերը մարմարէ մեհեաններ գիտէ,  
Ուր հինաւորց աստուածները՝ ազնուօրէն գորաւոր,  
Քու յոգնութիւնդ կը հասկնան...

Ու մարդկօրէն անոր մեծ ցաւը կ'ապրին...:  
Աւա՛ղ, մինչեւ ե՛րբ մեր մարմինները տարփաւոր  
Այսչափ տենդօրէն պիտի գալարուին...

Դէպի փայտէ դագաղները դարաւոր՝  
Յափտենական ու ապարդիւն կեանքին,  
Վերջապէս իրիկուն մը մխրճուելու համար...  
– Թէեւ այնչա՛փ չարաշուքօրէն —

Արհաւիրքով լեցուն, բայց փրկարար ծոցը հողին:  
Գիտեն, սքեմիդ մէջի վանականի իրանդ ոսկիէ  
Շատ ապրած Աստուածի մը խոնջէնքն ունի.  
Ուրեմն եկո՛ւր սա խարտեաշ ու խորունկ ու լուռ ու մերկ հարսներէն  
լեցուած՝

Մեր գինիի նուիրական սափորն ա՛լ վար դնենք,  
Թէեւ ան մեր երգերուն խենթութիւնը կ'ըլլար...

Ու այն բոլոր արշալոյսէ ծաղիկները, որ քաղեցինք,  
Անկարելի պաշտամունքին համար...

Այս բոլորը ձգենք, մեր կուրծքերուն ադամանդէ խաչերուն հետ,  
Ո՛վ բարեկամ ու բախտակից ու հոյակապ քրմապետ,  
Այնպէս չէ՞, ես ալ այս բոլորը ճանչցայ,  
Քեզի հետ ա՛յնչափ ապարդիւնօրէն,

Իմ սիրահար տղու խօլաթեւ իրիկուններուս մէջէն,  
Յոգնած եւ արիւնոտ ճակատիս դիմաց, անհունօրէն, առ յաւէտ...:

Ու արդէն աւագներու մոզերն աստղերուն տակ ըսին թէ  
Հողին բոլոր գինիները ա՛լ մոլախինդ պիտի ըլլան,  
Ու բոլոր կապոյտ շուշաններն ալ ձեր Յոյսի ծաղկանոցին,  
Ամենը մէկ, յանկարծօրէն ագռաւներու պիտի փոխուին...

Ու յետոյ գիտես որ բոլոր օձերը փեթակներուն տակ,  
Մեզի համար այն սե՛ւ անձրեւներէն ի վեր, հիմակ,  
Մահագութօրէն վաղուան մեղրը կը պատրաստեն,  
Ու դեռ կարծեմ թէ գետնափորներուն մէջ է որ  
Բոլոր բրուտները, մեռելներու հողերէն,

Ո՞ր ժամանակէն ի վեր ապրողներուն համար մինչեւ այսօր  
Ջուրի կուժեր կը շինեն...

Ու այն լամպարը, որով Յնորքը կը հսկենք մեր կտաւէ վրանին  
տակ,

Ահաւասի՛կ, քեզի կ'ըսեն, Արշալոյսէն դեռ շատ առաջ պիտի  
մարի...:

Օ՛, թեղ թեիս անցո՛ւր ու խարխափելէն քալէ՛,  
Ո՛վ ծանր ու դանդաղ ու յոգնած ուխտաւոր,  
Որովհետեւ վաղորդայնը անգթօրէն սուտ է...  
Ու մեր զգայախաբի ոտուրներն ալ յոգնած,  
Կեանքին մինչեւ Իրիկունները երթալու համար:  
Դէպի խաւարն ու Մոռացումը թափանցէ՛,  
Ջուրերու երիտասարդ գաւակին հետ առանձին,  
Ու քո տարագիր ճամբորդի տառապանքդ բոլոր  
Ու այն աղջամուղջի դարերը, գոր օրերն ուսերուդ վրայ  
հարկեցին...

Այդ բոլորը ամէնը մէկ ինծի տո՛ւր...  
Ու միսիդ պատանքներն ալ հոգիիս վրան նետէ՛...  
Թեղ թեի՛ն անցո՛ւր ու քալէ՛՝ Յաւին հետ հայրօրէն,  
Անոր վիրաւոր եղնիկի աշուրներն իմաստուն  
Կեանքին բոլոր ճամբաները գիտեն...

Հոգիիս վրայ լուսինը կը ձիւնէ...

## ԱՐՅՈՒՆՔՆԵՐՍ

### Ա

Եւ մաքրաթեւ երագիս հետ մինակ էի հովիտներուն մէջ հայրենի,  
Քայլերս էին թեթեւ, ինչպէս քայլերը խարտիշագեղ եղնիկին,  
Եւ գուարթութեամբ կը վազէի, կապոյտէն եւ օրերէն բոլորովին  
գինով,

Աչքերս ոսկիով եւ յոյսով՝ եւ հոգիս աստուածներով լեցուն...

## Բ

Եւ ահա բարեբեր Ամառն իր պտուղները գամբիւղ առ գամբիւղ,  
Մեր պարտեզին ծառերէն դէպի հողը եւ դէպի գիւ կ'ընծայէր,  
Եւ ես լռութեամբ՝ գեղուղէջ ոռիւիւն ներդաշնակ հասակէն  
Երգերս ստեղծելու համար խորհրդաւոր սրինգիս ճիւղը կը  
կտրէի...

## Գ

Կերգէի... Ադամանդեայ առուակն եւ թռչուններն հայրենագեղ,  
Աստուածային աղբիւրներուն յստակահոս մեղեդիներն  
անդադրում  
Եւ առաւօտեան գեփիւղը, քրոջական գորովներու ա՛յնչափ նման,  
Այս բոլորն իմ երջանիկ երգերուս թոթովումին կը ձայնակցէին...

## Դ

Այս գիշեր երագիս մէջ, ձեռքս առի գրեզ, ո՛վ քաղցրախօս Սրինգ,  
Շրթունքներս գրեզ ճանչցան՝ ինչպէս համբոյր մը հին օրերու,  
Բայց շունչս յիշատակներու զարթնումէն, յանկարծօրէն մեռաւ,  
Եւ երգիս տեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ, արցունքներս էին որ ինկան  
վար...:

## ԵՍ ԵՐԳԵԼՈՎ Կ՛ՈՒՉԵՄ ՄԵՌՆԻԼ

### Ա

Սպասումիս եւ Յոյսիս քաղցրութեանը հետ մինակ էի այդ իրիկուն  
Եւ Փրկութեան ու Տառապանքի նժարովը Հայրենիքին բախտը կը  
կշռէի...

Երբ հեռակայ տանս դուռը, գիշերուան սարսափին մէջէն,  
ուժգնապէս բախեցին.

Եւ ժպտուն՝ ընկեր մը ներս մտաւ, շքեղօրէն գեղեցիկ, եղբայրադէմ  
եւ ահաւոր...

## **Конец ознакомительного фрагмента.**

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.